Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47>> ծածկագրով ՀՀ Կառավարական տուն 3 շենքի 4-րդ հարկի սանհանգույցների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 24.12.2019թ.
ժամը 18:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան
Դ. Շատվերյան
Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Ար. Գրիգորյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման, ինչպես նաև առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 12.12.2019թ.

- հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<ԱՎԱԳ-ՇԻՆ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

- ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

բ) Գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի, ինչպես նաև Մասնակցի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության ուսումնասիրության արդյունքում 19.12.2019թ. նիստին արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1) Հավելվածներ 3-ը և 3.2-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

2) Մասնակիցը՝ հրավերով պահանջվող բարձրագույն կրթությամբ <<ճարտարագետ-էներգետիկ (էլեկտրիկ)>> մասնագետի համար ներկայացրել է Ուիյան Նիկողոսի թեկնածությունը, սակայն վերջինիս որակավորումը հավաստող փաստաթղթում նշված է <<ինժեներ-քիմիկ-տեխնոլոգ>>,

3) Կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ Մասնակիցն ունի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 153,480 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված չափը, ինչպես նաև Մասնակցի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկից (<<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշ):

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ ծանուցվել է Մասնակցին (կցելով Կոմիտեից ստացված տեղեկատվությունը) երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում Մասնակցի կողմից, բացառությամբ <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի, արձանագրված մյուս անհամապատասխանությունները շտկվել են:

<<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով Մասնակցի կողմից ներկայացվել է Կոմիտեից ստացված գրության պատճենը՝ համաձայն որի՝ Կոմիտեի էլեկտրոնային կառավարման համակարգում առկա տվյալների և Մասնակցի կողմից ներկայացված հաշվարկ-հաշվետվությունների 01.01.2019 - 30.11.2019թ. համար գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է հայտարարագրվել 19.820.602 (տասնինը միլիոն ութ հարյուր քսան հազար վեց հարյուր երկու) ՀՀ դրամ:

Հաշվի առնելով, որ Մասնակցի կողմից վերը նշված որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ հրավերի պահանջներին բավարարող փաստաթուղթ չի ներկայացվել՝ Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի և գնահատման թերթիկների համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 23.12.2019թ. կայացած նիստի արդյունքում որոշեց Մասնակցի հայտը մերժել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակցին՝ <<ԱՐՏՇԻՆ-1>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47 ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակցի վերաբերյալ Կոմիտե ներկայացված հարցման, ինչպես նաև հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 23.12.2019թ.

- հարցում է ուղարկվել Կոմիտե գնման ընթացակարգի հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<ԱՐՏՇԻՆ-1>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- ծանուցվել է Ընկերությանը երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում (24.12.2019թ. դրությամբ) ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ չի արձանագրել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<ԱՐՏՇԻՆ-1>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 3.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

5. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/47 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Դ. Շատվերյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան